

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հայոց լեզուի  
անգամ դիրքապահութեան  
խաչը.



1931

04 AUG 2010

Style on

Fig. 1

ԿԱՌՈՒՑԵՆՔ  
ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ  
ԴԻՐԻԺԱԲԼՆԵՐԻ  
ԵՍԿԱԴՐԱ



29.13

4-25

ԽՍՀՄ ժող. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

1931

~~29.13~~  
4-25

# ԿԱՌՈՒՑԵՆՔ

ԴԻԲԻԺԱԲԼՆԵՐԻ ԵՍԿԱԴՐԱ.  
ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒԹՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏՎԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈԽԿՎԱ

1931

## ԱՌԱՋԱԲԱՆ

Դիրիժաբլների կառուցման սկիզբը — դա մեր  
յերկրի ինդուստրացման հաջողությունների, սոցիա-  
լիստական շինարարության մեր հսկայական տեմպերի,  
«տեխնիկային տիրանալու» և «կապիտալիստական  
յերկրներին հասնելու և նրանցից առաջ անցնելու»  
լոգունգների արագ իրականացման բնորոշ ապա-  
ցույցներից մեկն է:

Դիրիժաբլը պատկանում է համաշխարհային տեխ-  
նիկայի ամենավերջին, գեռես վերջնականորեն չմշակ-  
ված նվաճումների թվին: Այդ ողային հսկան, վորի  
կառուցման արժեքը մենակ (չհաշված ցամաքային  
կառուցվածքները — կայմերը, ելինգները և այլն)  
համուլտ և 4 միլիոն ոռորդու, հնարավորություն և  
տալիս իսկական հրաշքներ գործելու հաղորդակցու-  
թյան միջոցների ասպարիզում: Դիրիժաբլը արդեն  
ապացուցեց, վոր նույնիսկ աշխարհաշուրջ ճանապար-  
հորդությունները նրա համար հասարակ ողային զրո-  
սանքներ են. նորերս Ցեղակելինի վրա ԽՍՀՄ յեկած  
դըր Եկեղեցները աշխարհաշուրջ ճամբորդություն եր  
կատարել, ունենալով միայն յերեք դադար և անցնե-



4584 - ԽԵ

Главлит № А-89.171

Заказ № 1601 Тираж 5000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,  
Шлюзовая набережная, 10.

լով 35 հազար կիլոմետր ճանապարհ։ Դիրիժաբլը արդեն ապացուցեց, վոր վաչ գիշերային խավարը, վաչ մասովուղը և վաչ անգամ Հյուսիսային ըմեռի սառցաշունչ ողը սարսափելի չեն նրա համար. այդ հաստաված և բազմաթիվ հեռավոր թոփչքներով և թոփչքներով գետի Հյուսիսային ըմեռը. Բացի դրանից գիրիժաբլը աշքի յե ընկնում իր խոշոր ապրանքաբանակությամբ — տասնյակ տոննաներ կարող ե՝ վերցնել խոշոր գիրիժաբլը։

Պարզ ե սրանից, թե վորպիսի բացառիկ լայն գործադրություն կարող են ունենալ դիրիժաբլները ԽՍՀՄ-յան մեջ, վորը գրավում ե յերկրագնդի վեցերորդ մասը և տիրապետում ե ահազին արկադիկ (ծայրահեղ Հյուսիսում գտնվող) հարստություններին։ Մեր ոլայմաններում գիրիժաբլների նշանակությունը բացառիկ մեծ է; Հենց այդ միջոցով կարելի յե առանձնապես հեշտ ու հարմար ձեռք պահպանել կենարունների կապը հեռավոր ծայրագավառների հետ. կարելի յե կարճ ժամկետում սեղ հասցնել եկաղեղիցիան (բրիգադները), փոխադրել անհրաժեշտ գույքը (հապճեպ սարքավորում, գրականություն, արագ փչացող առարկաներ, դյուրագեկ և արժեքավոր նյութեր և այլն), վեցներ արժեքավոր ապրանքներ (մոբիլներ, զանազան իրեր և այլն). Դիրիժաբլների այդ առավելությունը առանձնապես պետք ե նկատի ունենան կենարուններից հեռու գանվող մեր աղքային հանրապետությունները և շրջանները։

Դիրիժաբլների գործադրության միջոցները և ողային հաղորդակցությունների այս միջոցի առավելությունները մանրամասնորեն նկարագրված են Ֆ. Ասթերզի «Դիրիժաբլը և նրա գործադրությունը» հոդվածում, վորը զետեղված ե այս գրքույիշում։ Սակայն, գիրիժաբլների այդ խաղաղ արժանիքների կողքին չպետք ե մոռանալ և նրանց ուղմական հատկությունների մասին։ Դարձյալ գիրիժաբլի նույն յերեք հիմնական առավելությունները — նրա ընդունակությունը՝ հեռավոր թոփչքներ կատարելու — առանց գաղարի, նրա խոշոր ապրանքաբանակությունը և նրա ընդունակությունը՝ դանդաղեցնել իր ընթացքը և նույնիսկ կանգ առնել ողում մոտորի աշխատանքը դաղարելու գեղքում (այերուպանները այդ գեղքում ցած են իջնում) — դարձնում են գիրիժաբլը վորոշ գեղքերում անփոխարինելի ռազմական միջոց։ Իմպերիալիստական պատերազմի ժամանակ գերմանացիները գիրիժաբլներից ուժակոծում եյին քաղաքները թշնամու ամենախոր թիկունքում (Պարիզ, Լոնդոն), կատարելով գիշերային հարձակումներ։ Նույն գերմանացիները պատերազմի ժամանակ գիրիժաբլների միջոցով կատ եյին սպահանում Հարավային Աֆրիկայում գտնվող իրենց զորքերի հետ։ Թոփչքներ կատարելով թշնամու զորքերի գլխի վրայով, գերմանական գիրիժաբլները մատակարարում եյին իրենց զորքերին պարեն, արժեքավոր ուղմամթերք և այլն։ Գերմանական ցեղակելինները (գիրիժաբլներ) հետապնդում

Եյին ջրասույզ նավակներին և վոչնչացնում նրանց,  
կատարում եյին և այլ ռազմա-ծովային գործողություններ։

Պատերազմի ժամանակ դիրիժաբլը պաշտպանության և հարձակման հզոր գենք եւ։

Յեվ — զարմանալի յերեռյթ՝ ինչպիսի խոշոր,  
նոր, թվում ե թե — ամենավերջին գործին ել մենք  
ձեռնարկենք, դուրս ե գալիս, վոր նրա մասին ար-  
տահայտվել ե Լենինը։ Ֆ. Իլինի այս գրքույկում  
զետեղված «Լենինը և դիրիժաբլը» հոդվածը պատ-  
մում ե այդ մասին։

Դուրս ե գալիս, վոր սրանից գրեթե 17 տարի  
առաջ, իմպերիալիստական պատերազմի ամենատաք  
պահին, Լենինը ասում եր՝ «Սպասենք, մինչև վոր  
ունենանք մեր դիրիժաբլները»։ Մասնավոր հարցի  
առթիվ (հակապատերազմական թերթիկներ ցրելու  
միջոցների մասին) Լենինը հաստատ համոզմունք ե  
հայտնել, վոր կլինի «մեր» իշխանությունը և կլինեն  
«մեր» դիրիժաբլները։

Լենինի մարգարեական խոսքերը արդարանում են,  
Մենք սկսում ենք կառուցել մեր դիրիժաբլները։  
Աշխատավորների հավաքած միջոցներով մենք ար-  
դեն նյութական հաստատուն հիմք ենք դրել չորս  
դիրիժաբլների կառուցման համար — «Պրավդա»,  
«Ռոսպավելմ», «Կիմ Վորոշիլով» և «Կոլոմոդնիկ»։  
Սակայն, անսպաս ե բանվոր դասակարգի յեռանդը և  
անչափ ե նրա խանդավառությունը։ Մոսկվայի քան-

վորների նախաձեռնությունը հիմք է դնում դիրիժաբլ-  
ների — Լենինի անվան մի ամբողջ եսկադրայի կա-  
ռուցմանը, ներառյալ առաջին չորս դիրիժաբլները և  
ավելացրած դրանց ելի յերկուսը — «Հին բոյլշիկ» և  
«Ստալին»։ Այդ եսկադրան գլխավորելու և  
առաջնորդելու յեւ «Լենին» դիրիժաբլը։

Մի վայրկյան անգամ չի կարելի կասկածել, վոր  
Լենինի անվան եսկադրայի իդեյան իրականանալու յեւ։

ԽՍՀՄ-յան աշխատավորները կրկին մի անգամ  
կցուցադրեն ամբողջ աշխարհին, թե ինչի յեւ ընդու-  
նակ սոցիալիզմ կառուցողների խանդավառությունը։  
Խորհրդային յերկը վրա կսավառնե պողպատե հսկա-  
ների հզոր եսկադրան։

Ն. Սեմակո

## ԵԵՆԻՆԸ ՅԵՎ ԳԻՐԻԺԱԲԼԸ

— Սպասենք, մինչև վոր ունենանք մեր զիրիժաբլները:

Այս խսկական մարգարեական խոսքերը ասել եր լենինը ինձ հետ խոսելիս մոտ 16 տարի սրանից առաջ՝ Յեվ բացառիկ վառ կերպով հիշեցի յես այդ խոսքերը Հոկտեմբերյան դաշտում գերմանական «Գրաֆ Ցեպպելին» ղիրիժաբլի գալու մոմենտին:

Ներքին հուզմունքով մտածում եյի յես իլյիշի այդ խոսքերի մասին, վորովհետև «Ցեպպելին» գալը քննորոշում եր խորհրդային ղիրիժաբլների կառուցման սկիզբը, իսկ դա նշանակում եր լենինյան պատգամի երագործում:

Յեվ հենց այժմ, յերբ մենք ընհղուապ ձեռնարկում ենք ղիրիժաբլների կառուցման գործին, տեղին կլինի պատմել, թեկուղ համառոտակի, այն մասին, թե վորպիսի հանգամանքներում եր ասել լենինը այդ խոսքերը:

1914 թ. ոգոստոսն եր: Իմպերիալիստական պատերազմի սկիզբը: Աշխարհի բոլոր ժողովրդները ուղարկված են արյունոտ սպանդանոց, II Ինտերնա-

ցիոնալի առաջնորդների դավաճանությունը: Շովիշնիզմը և հայրենասիրական ուգարը ընդգրկել են բոլորին: Մեր շրջանում ևս մի քանիսը չդիմացան: Թվում եր, թե կորած ե այն բոլորը, ինչ վոր միշտազային և ոռւսական պրոլետարիատը նվաճել ելին տասնյակ տարիների համառ ու ծանր պայքարի գնով:

Յեվ ի լրացում այդ բոլորի — սոսկալի լուր բոյլշևիկների համար՝ լենինը ձերբակալված ե Գալիցիայում: Մղղավանջային խոհերը ձնշում են մեզ: Բոլոր մտքերը նրա — լենինի մասին են: Ձեռք են առնվում բոլոր միջոցները նրան ազատելու համար: Վերջապես, լուր ենք ստանում — լենինը ազատված ե և յեկել ե Բերն (Շվեյցարիա):

Իսկ մի քանի որից մենք, վոր ապրում ելինք այն ժամանակ լուսանում, ստացանք պատերազմի զեմունության հուշակավոր թեզիները, վոր զբած ելին նաղեժդա կոնստանտինովնայի ձեռքուփ:

Ասես անթափանց խավարի մեջ առկայժած վառ արշալույս հանդիսացան մեզ համար այդ թեզիները:

Լենինը նախատինքով ե դրոշմում մատնիչներին: Լենինը պայքարի յե կանչում: Լենինը կոչ ե անուս բոլոր յերկըների պրոլետարիատին զենքը դարձնել իրենց բուրժուական կառավարությունների դեմ:

Մեծ հուզմունքով կարդում ենք այդ թեզիները: Այն միտքը, վոր ամեն ինչ չի կորել, վոր լենինը մեզ հետ ե, բանվոր դասակարգի հետ, արիություն և ներշնչում մեզ, և մեզանից ամեն մեկը պատրաստ

ե կովի մղվել։ Յանկություն ե ծագում շուտով տես-  
նվել իւլիչի հետ, խոսել նրա հետ մեր զրության  
մասին և պարզել թեղիսների մի քանի կետերը։

Սեպտեմբերի 9-ին յես և Լոզանի սեկցիայի այլ  
յերկու ընկերներ յեկանք Բերն։ Գնացինք ընկ. Շկլովս-  
կու բնակարանը, ուր հույս ունելինք հանդիպել Լե-  
նինին։ Նրան չգտնելով այնտեղ, փորոշեցինք սպասել։

Սպասում ենք։ Զանգ լսվեց։ Շկլովսկու յերեխա-  
ները վազեցին դուռը բանալու, և անմիջապես լսվեց  
Իւլիչի զվարթ ձայնը և յերեխաների ճկուցը — Լենինը  
խաղում եր յերեխաների հետ։ Մենք շտապեցինք մի-  
ջանցք — հանդեպ Լենինին, համբուրվեցինք նրա հետ  
և մտանք սենյակ։

Կասկածելով, վոր մեր ժամանումը կապված ե  
ինչ-վոր հատկապես կարեոր գործի հետ, Լենինը  
ժպտալով հարցրեց աշխույժ տոնով՝

— Դե, պատմեցեք ~ տեսնեմ, ինչու յեք շնորհ  
բերել։

Նա սնդիմի նման կենդանի յեր, առույգ ու  
յեռանդուն, նրա դեմքը վոգեորված եր։

Ցես ասացի՞

— Ցեկել ենք ձեզ հետ տեսնվելու։

— Միայն, — արտասանեց Լենինը, առես դժգոհ։  
Այն ժամանակ յես ավելացրի։

— Վոչ միայն տեսնվելու, այլ և խոսելու թեղիս-  
ների մասին։

— Դա արևեն այլ բան ե։ Դա լավ ե։ Ավտոս,  
վոր յերեկ այստեղ չելիք։ Մենք մաքերի փոխանա-  
կություն ունեյինք թեղիսների մասին, և հենց յերեկ  
յերեկոյան Սամոյլովը տարավ նրանց Ծուսաստան։

Ցեվ իսկույն դիմեց ընկ. Շկլովսկուն, ինդրելով  
հենց նույն յերեկո հավաքել սեկցիան։

Նույն որը, յերեկոյան ժամը 7-ին, մենք հավաք-  
վեցինք մի փոքրիկ կափեյում Լենգասսաշտրասսե փո-  
ղոցի վրա։ Ներկա եյին — Լենինը, Նադեժդա Կոնս-  
տանտինովսան, Շկլովսկին, Զինան, Կորնըլյումը,  
Դ. Զ., Շկլովսկայան և մենք — լոզանցիներս։

— Դե, պատմեցեք, — ասաց Լենինը։

Մաքերի փոխանակությունից հետո յես խոսք  
վերցրի թեղիսների յոթերորդ կետի դրույթներից  
մեկի առթիվ, ուր սկզբում մոտավորապես ասված եր  
պատերազմող բոլոր բանակների խրամատներում հա-  
կապատերազմական թուցիկներ տարածելու անհրա-  
ժեշտության մասին (այդ թեղիսները առաջին ան-  
գամ հրապարակված են Լենինի յերկերի XVIII հատո-  
րում «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատայի խնդիր-  
ները յեկըռպական պատերազմում» վերնագրով, բայց  
այդ խոսքերը այնտեղ չկան)։ Ցես համարում ելի,  
վոր մեր պայմաններում դա գործնականորեն անի-  
րազործելի յե, և ասացի, ծիծաղելով — «այ, յեթե  
մենք ունենայինք մեր զիրիֆաքլները, ինչպես գեր-  
մանացիք, այն ժամանակ մենք կհեղեղելինք խրա-  
մատները մեր թերթիկներով։ Այլապես — դա սոսկ  
փանտազիա յե»։

Վլաղիմիր ի Ավիչը, վոր այդ միջոցին ման եր գալիս յետ ու առաջ կաֆեյի փոքրիկ սենյակով, ձեռքերը գրպանը դրած, այդ խոսքերը լսելով, նուրբ ժպտաց:

Նա վոչինչ չասաց իմ առարկության առթիվ, և յետ այն ապահովությունը ստացա, վոր նա այդ առարկությունը համարեց վոչ եյական:

Սակայն, դրա պատասխանը յետ ստացա, բայց արդեն մի ամիս անց:

Հոկտեմբերի 11-ին Լենինը յեկավ Լոզան այն նպատակով, վորապեսզի աննկատելի կերպով ներկա գտնվի Պլեխանովի գեկուցմանը պատերազմի մասին, վոր կազմակերպել ելին մենշևիկները միայն իրենց համախոհների համար: Նրա հետ միասին յեկան ընկընկ. Զինովյեվը, Ինեսսա Առմանդը, Կոփլենկոն, Շկլովսկին և Ռոզմիրովիչը:

Լենինի առաջարկով, մենք կայարանից հեռացանք վոչ խմբովին, վորապեսզի չգրավենք մեր վրա պատահաբար մեղ հանդիպող մենշևիկների ուշադրությունը. Նա յերկուուղ եր կըում, վոր Պլեխանովը կիմանա իր գալու մասին և կհրաժարվի գեկուցումից:

Յես գնում եյի Լենինի հետ: Նա խորասուզված եր մտքերի մեջ: Յերեի նրան հուզում եր ապազա հանդիպումը Պլեխանովի հետ:

Մի քանի ժամանակից, յետ խախտելով լոռությունը, հարցը:

— Տեղեկություն ունեք, արդյոք, վոր թեղիսները Ռուսաստանում ստացվել են:

Լենինը պատասխանեց.

— Այո, Ստոկհոլմից հազորդեցին, վոր թեղիսները ստացվել են Պիտերում, — և ինձ համար միանգամայն անսպասելի կերպով ասաց.

— Հա, գիտեք, յետ այն տողերը ջնջեցի:

Նա այդ ասաց, կարծես շարունակելով սկսված խոսակցությունը: Յես իսկույն կուհեցի, վոր դա պատասխան եր իմ այն առարկությանը թեղիսների յոթերորդ կեափ զրույթի առթիվ, վոր յետ արտահայտել եյի Բերնում մի ամիս առաջ:

Լենինը նայեց ինձ, ամուր կոծկելով աջ աչքը, և խորամանել ժայիտով ավելացրեց.

— Այո, սպասենք, մինչև վոր կունենանք մեր դիրիժարլները:

Այդ խոսքերը անջնջելի դրոշմվեցին հիշողությանս մեջ:

Այժմ, յերբ մտածում ես այդ մասին, խորը հավատացած ես, Վոր նույնիսկ այն ոսոկալի պահին Լենինի հանճարեղ պլիսում կար այն պարզ միտքն ու հավատը, վոր իմպերիալիստական պատերազմը կվերածվի քաղաքացիական պատերազմի, վոր պրոլետարիատի հաղթանակը անխուսափելի յե, վոր իշխանությունը կինք բոյլիկների ձեռքում և այն ժամանակ մենք կունենանք մեր դիրիժարլները:

Լենինի մարգարեռությունը իրագործվեց:

Մենք ընդհուպ մոտենում ենք խորհրդային դիրիժարլների կառուցմանը, և շուտով Խորհուրդների յեր-

կրի վրա ճախրելու յեն հսկաները, կապելով իրար և ուղիղային Միության ամենահեռավոր տարածությունները:

Լենինի ավելի քան 16 տարի սրանից առաջ աված պատգամը իրագործելու համար մենք պետք են ձեռնարկենք հսկաների՝ լենինի անվան եսկաղրայի կառուցմանը: Այս կոչով եմ դիմում յես մեր Միության առաջավոր ուղարնիկ - բանվորներին և կոլխոզնիկ-գյուղացիներին, իսկ առաջին հերթին Մոսկվայի և Լենինգրադի պրոլետարիատին և կարմրադրու լենինյան կոմյերիամիությանը, ին պողպոլչիկներին — լենինի զինակիցներին, ին բոլշեկոների ընկերությանը, և առաջարկում եմ հարվածային կարգով միջոցներ հավաքել դիրիժարլների՝ լենինի անվան եսկաղրա կառուցելու փոնդի համար:

Ֆ. Իլին

## ԴԻՐԻԺԱԲԼԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀ Միության անծայրածիր տարածությունները ստիպում են ամբողջությամբ ոգտագործել հաղորդակցության բոլոր հնարավոր սիջոցները՝ մշտական կազ հաստատելու համար կուլտուրական կենտրոնների և հեռավոր ծայրագավառների միջև:

Բավարար քանակությամբ հաղորդակցության ճանապարհների, կազի արագ ու հարմար միջոցների բացակայությունը, տարվա յերկարատև ժամանակաշրջաններում իրենց վարչական-տնտեսական կենտրոններից կտրված բազմաթիվ ռայոնների առկայությունը, առհասարակ շատ քիչ ուսումնասիրված կամ չուսումնասիրված ռայոնների առկայությունը — այդ բոլորը պահանջում են անհապաղ գործադրել հաղորդակցության այն բոլոր միջոցները, վոր կարող ե տալ ժամանակակից տեխնիկան:

Այդ միջոցների թվում ամենից ավելի աչքի ընկնող տեղերից մեկն ե գրավում դիրիժարլը: Դիրիժարլի հետ շատ գեղագերում չի կարող մրցության

մտնել հաղորդակցության գոյություն ունեցող միջոցներից և վոչ մեկը:

Դիրիժաբլի հիմնական առավելություններն են — նրա մեծ չափով բեռներ բարձրացնելը, թոփչքի յերկարատև լինելը, գիշերային թոփչքներ կատարելը, միգամած յեղանակով և ցած ամպերի միջով թուչելը:

Դիրիժաբլով տեղափոխություններ կատարելու արագությունը ներկայումս հասնում է 128—140 կիլոմետրի՝ մի ժամվա մեջ։ Արագության խնդրում զիրիժաբլը յետ ե մնում միայն սավառնակից, սակայն թոփչքի յերկարատևության, ծանրություններ բարձրացնելու և անվտանգության կողմից նա զգալի չափով դերագանցում ե սավառնակին։

Դիրիժաբլը ունի, անշուշտ, և թերություններ։  
Դիրիժաբլների թոփչքը կատարվում ե չափազանց դյուրավառ կազմով՝ ջրածինով։

Իսկ մոտորները սովորաբար գործում են առաջնակարգ բենզինով — ավիացիայի համար գործադրվող բենզինով, — ուստի և հրդեհի տեսակետից դիրիժաբլը գոտնվում ե բավականին վտանգավոր պայմանների մեջ։ Սակայն այդ պակասությունը արդեն վերացվում է։ Դիրիժաբլը հրդեհից անվտանգ դարձնելու հարցում մեծ քայլեր ե արել Ամերիկան, վորը փոխարինել ե ջրածինը հելիյ կոչված դազով։ Այդ դազը համարյա հավասար ե ջրածինին իր բարձրացնող ուժով, բայց նա չի վառվում։ Դրա հետ միաժամանակ աշխատանքներ են կատարվում՝ բենզինով

աշխատող մոտորները փոխարինելու նավթով աշխատող մոտորների։

Այդ փորձը մենք պետք ե հաշվի առնենք։ Ինքնը ստիճանը հասկանալի յե, վոր մեզանում հելիյ կճարվի և այն վայրկյանից, յերբ մենք կզբանանք նրա տեղը, մենք պետք ե հոգանք արդյունաբերական յեղանակով ձեռք բերելու այն և համապատասխան պաշարներ կուտակելու։

Դիրիժաբլի մյուս բացասական կողմն ե հանդիսանում զիրիժաբլը շահագործելու համար անհրաժեշտ շինությունների թանգությունը՝ ելլինգների (այսինքն հատուկ ընդարձակ շենքերի, ուր գտնվում ե զիրիժաբլը յերկարատև կայանների զեպքում և ուր նա վերանորոգվում ե), կազող կայմերի (զիրիժաբլների ժամանակավաք կայանի համար) և այլն։

Ստիայն ելլինգները անհրաժեշտ են միայն ուղեգծերի վերջնական կետերում, իսկ միջանկյալ կետերի սարքավորումը շատ ավելի եժան ե։ Մեր նշանակած ուղեգծերի հսկայական յերկարության պայմաններում զիրիժաբլների սգտագործումը առևտրականորեն վիպվին կարդարացնի իրեն։

## ԴԻՐԻԺԱԲԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՅԵՎ ՆՐԱ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Դիրիժաբլը սովորաբար բարեհաջած ենձին մեծ բալոնից, կարճ բութ գլխով այլիքար, սրածայլ վեր-

ջավորությամբ։ Ողում ավելի կայուն դարձնելու համար բալոնի յետի ծայրին ամրացնում են այսպես կոչված ստարիլիզատորներ—խաչաձև հարթությունների ձևով, վորոնք հնարավորություն են ապահովի գիրիժարվին ուղղահայց գրություն ընդունելու։


Դիրիժաբլի բալոնը շինուած է հաստ կրկնակի կտորից կառւչուկե շերտով և պաշտպանվում է արեփ ճառագայթների մասակար գործողություննից նրանով, վոր կտորը ծածկվում է հատուկ բաղադրության նյութով, վորը սլարունակում է ալյումինի։

Դիրիժաբլը սպահվում է ողում շնորհիվ նրա պարեկի մեջ յեղած գաղի բարձրացնող ուժի։

Դիրիժաբլները կառավարվում են ուղղության և բարձրության զեկերի ողնությամբ, վորոնք սարքված են, հարթությունների (ստարիլիզատորների) շարունակության ձևով, պարկի տունի մասում և տրոսների (սուդապատե պարանների) ողնությամբ կապված են շուրջվարների (զեկի անիֆլերի) հետ, վորոնք տեղավորված են գոնդոլում։ Դիրիժաբլի բարձրանալու և իջնելու ժամանակ գաղով և ողով կառավարելը կատարվում է նույնպես գոնդոլից հատուկ զազային և ողային կլասանների ոգնությամբ։

Դիրիժաբլը կառավարելու, այսինքն շրջադարձ կատարելու, բարձրանալու և իջնելու համար ոգտվում են հորիզոնական և ուղղահայց զեկերով։ Հորիզոնական զեկերը կարգավորում են բարձրությունը, իսկ ուղղահայցները ծառայում են շրջադարձի համար։

Բարձրանալով մընոլորտի վերին շերտերը, ուր աղբավելի նոսր ե ե, հետեաբար, արտաքին ճնշումը պահպառ է, դիրիժաբլը սկսվում է փօվել, վորովինետե գազը լայնանում է։ Վորպեսզի բալոնը չալայթի, գազի մի մասը բաց են թողնում նրա միջից։ Վորքան ավելի բարձր պետք է բարձրանա դիրիժաբլը,



Նկ. 1. „Московский Химик-Резинщик“ դիրիժաբլ։

այնքան ավելի բալասա ե դուրս գցվում նրա միջից, վորսկիսին ամեն մի թոփչքի ժամանակ վերցնում են։ Բալասա են ծառայում ավազը և ջուրը։ Զրի առավելությունը կայանում է նրանում, վոր ավազը կարող է ընկնել մոտորների մեջ և փչացնել նրանց։

Ցած իջնելիս, դիրիժաբլը, վոր բարձրանալիս բաց եր թողել գաղը, փոխում ե իր ձեր, վորից նա կարող ե կոտրվել-կիսվել։ Այդ պատճառով, դիրիժաբլի պարկի մշտական ձեր պահպանելու համար շինված ե հատուկ սարքավորում, վորը բաղկացած ե պարկի ներսում գտնվող փոքրիկ բալլոնից, այդ փոքրիկ բալլոնը հատուկ խողովակով (շլանգով) միացած ե ողային վենտիլյատորի հետ, վորի ոգնությամբ բալլոնի մեջ կարելի յե ոդ մացնել և այդպիսով պահպանել պարկի ձեր։ Այդպիսով հավասարվում ե դիրիժաբլի ծավալը։

Այդպես, գործի դնելով դեկերը, բալլաստը և հարկավոր դեպքում փողը բաց թողնելով, սկիզբը կառավարում ե դիրիժաբլը։


Կառավարվող ոդային նավերը (դիրիժաբլները) բաժանվում են փափուկ, կիսակոշա և կոշտ դիրիժաբլների։

#### ՓԱ.ՓՈՒԿ ԴԻՄԻԺԱԲԷՆԵՐ

Փափուկ դիրիժաբլները բաղկացած են կտորեղենից պատրաստած պարկից, վորը անմիջականորեն լցոված ե գաղով։ Գոնդոլը (նավակը) կախ ե տրվում հենց պարկից։

Սովորաբար փափուկ դիրիժաբլները մեծածավալ չեն (10.000 խորանարդ մետրից վրչ ավելի) և ունեն սակավուժ մոտոր, այս պատճառով ել նրանց արագությունը բավականին թույլ ե, սակայն դդալի չափով բարձր ե ամեն մի արագընթաց յերկաթուղային

գնացքից։ Բեռնաբարձման կարողությունը և թոփչքի տևողականությունը նույնապես առանց վայրեջքի բավականաչափ սահմանափակ են, և այս պատճառով նրանք չեն կարող ոգտագործվել ապրանքատարության յերկարաժե թոփչքների համար։



Նկ. 2. „Մոսկովսկի Խիմիկ-Ռէզինուս“-ի գոնդոլը։

Սովորաբար փափուկ դիրիժաբլները կատարում են փոքրիկ առաջադրանքներ ողի մեջ և, գլխավորապես, նրանց վրա սովորեցնում և պատրաստում են համապատասխան կադրեր, մեծածավալ դիրիժաբլների վրա աշխատելու համար։


Վորպես ողինակներ այդ սխտեմի դիրիժաբլների (ընդհանրագույն նրանք բոլորն ել շատ կամ քիչ նման են իրար), բերենք այստեղ.

„Московский Химик-Резинщик“, վորը թուղթում եր մեզանում 1926—1928 թվականներին, և „Комсомольская Правда“, վորը 1930 թ. աշնանը թափչներ եր կատարում Մոսկվայի ույոնում:

Այդ յերկու դիրիժաբլներն ել կազմել ու շնորհ ե մի մարդ, ինժիներ Պ. Վ. Ֆոմինը և նրանց տարբերությունը կայանում է նրա մեջ, վոր առաջին դիրիժաբլը շնչված ե գործարանում և ունի 105 ձիու ուժի միատ մոտոր, իսկ յերկրորդը ունի 185 ձիու ուժի Բ.М.В. մոտոր և շնորհիվ այդ հանդամանքի դիրիժաբլը և ավելի արագքնթաց ե, և ավելի լավ ե կառավարվում:

Յեթե յերկու տարբա շահագործման ընթացքում „Московский Химик-Резинщик“ դիրիժաբլը կատարել և 24 թոփչը, „Комсомольская Правда“-ն յերկու ամսվա ոգտագործման ընթացքում կատարել և ավելի քան 30 թոփչը, չնայած վոր նրա ոգտագործման ալայմանները շատ ավելի վատ են յեղել (իշնելու տեղը ձորի մեջ, բաց յերկնքի տակ, առանձին կանոնավորիչ աշխատանքների ձգձգումը՝ կատուրի բացակայության պատճառով, գազի, հրանյութերի, բոլոր ոժանդակիչ իրերի մատակարարման անկարգ դրությունը, ինքնուրույն կոմանդայի բացակայությունը, վորի պատճառով խանգարվում ելին թոփչը ները և այլն):

Այս յերկու դիրիժաբլների ոգտագործման փորձը ցույց տվեց, վոր այդպիսի փոքրածավալ դիրիժաբլ-ները, եժան և հասարակ լինելով բայ կառուցվածքի, կարող են լավ արդյունքներով ոգտագործվել թուղող կազմ և սպասարկող պերսոնալ (կոմանդա) պատրաստելու համար:



Նկ. 3. „Комсомольская Правда“ դիրիժաբլը:

#### ԿԻՍԱԿՈՇՑ ԴԻՐԻԺԱԲԼՆԵՐԸ

Կիսակոշտ դիրիժաբլը միջին աեղն և բռնում փափուկ և կոշտ դիրիժաբլների միջև և տարբերվում ե առաջինից նրանով, վոր նրա պարկի ներքեմ մասի ամբողջ ողությամբ ներսի կողմից անցնում ե մի մետաղյա ձող, վորը կոչվում ե կիլ և հնարավորություն և տալիս ծագալը մեծացնելիս ավելի համաշա-

փորեն կարգավորել բեռնավորումը դիրիժաքի ամբողջ մակարդակի վրա և անմիջապես կապել նավակը կիլին (հետեւաբար՝ նաև պարկին), Արտաքին կախվածքի (նավակը և այլն) վոչնչացումը ավելացնում է դիրիժաքի թոփչքի արագությունը:


Բացի այդ, մեծ ծավալը հնարավորություն եւ տալս հանելու ընդհանուր նավակի միջից մոտը ըները, սարքելու նրանց առանձին-առանձին և այսպիսով ստանալու ավելի մեծ ուժ ե, հետեւաբար՝ նաև արագություն:

Կիսակոշտ ողանակի պարկը նույնպես, ինչպես փափուկ դիրիժաքինը շինգում եւ ուետինե նյութից (պերկար), վորը հիմնականում կրում եւ ամբողջ ձանրությունը:

Կիսակոշտ դիրիժաքիների զիսավոր ներկայացնեցին մեկն եւ հանդիսանում իտալիան հանձինս կրնուտրուկտոր Նորֆլեյֆ, վորը թոփչքներ կատարեց իր դիրիժաքիներով գետի Հյուսիսային բևեռը 1928 թ.:

Իտալիայում կառուցվել են մի ամբողջ շաբք կիսակոշտ ողային նավեր, սկսած 1,010 խորանարդ մետր ծավալից մինչև 51,000 մետր, վորի շինությունը, սահայն, չափարարեց, վորովինեաւ 1928 թվականի նավակոծությունից հետո Հյուսիսային բևեռում, Նորֆլեյֆի գործարանում դադարեցին աշխատանքները, Իտալական կիսակոշտ դիրիժաքիները շատ լավ արագություն ունեյին, որինակ — «Նորգե» նավը, վորով Նորֆլեյն 1926 թ. թուալ Հոռմից Լենինգրադի և Շաբիցրերգենի վրայով գետի Ալյասկա, ունենալով 18,500 խորա-

նարդ մետր ծավալ, մի ժամկա մեջ 100 կիլոմետր առարածություն եր կտրում, իսկ «Դրաֆ Յելպելին» կոչտ դիրիժաքը, վոր 1930 թվի սեպտեմբերի 10-ին թուել եր Մոսկվա և ավելի մեծ ծավալ և ուժ ուներ, թոշում եր միայն 128 կիլոմետր մի ժամում: Զպեաք ե մոռանալ և այն, վոր կիսակոշտ դիրիժաքիների շի-



Հնկ. 4. Կիսակոշտ M.1 սկսական դիրիժաքը:

նությունը շատ ավելի եժան ե նոտում, քանզի կոշտ դիրիժաքիներինը:

Արժեք յերկու խոսքով կանգ առնել գերմանական կիսակոշտ դիրիժաքիների վերջին տիպերի վրա, վորոնք ոգտագործվում են ուսուցանելու, վարժման և

փոքրիկ հանձնարարություններ կատարելու համար։  
Թվում եր, թե՝ կառուցանելով այնպիսի հսկա դիրի-  
ժաբլներ, ինչպես «Գրաֆ Յեպպելին» և, վորը ունի  
105.000 խորանարդ մետր ծավալ (Լ.Ա. — 127) և  
Լ.Ա. — 128, վորի ծավալը հավասար է 150.000 խո-  
րանարդ մետրի, — այլիս կարիք չկա փոքրիկ դիրի-




Նկ. 5. Կիսակոշտ Դ. Օ. № 29 սկսակմի գիրիժարլը.

ժարլներ կառուցելու, Սակայն Գիրմանիան շինում է  
դրանց, վորովիետև դրանք ունեն մի շարք արժանիք-  
ներ։ Դրանցից ամենաբնորոշ գիրիժարլներն են,  
Р.К. — 27, իր 1435 խորանարդ մետր ծավալով,

35 ձիյու ուժ ունեցող յերկու Անգանի մոտորով,  
10 ժամվա հրանյութի պաշարով և թոփչքի 2000 մետր  
բարձրությամբ։

Պ.Ի. — 28, ունի 1800 խորանարդ մետր ծավալ,  
80 ձիյու ուժի Սիմենսի մի մոտոր, թոփչքի արագու-  
թյունն է 90 կիլոմետր մի ժամում։ Այս գիրիժարլը



Նկ. 6. «Գրաֆ Յեպպելին» կոչտ սկսակմի գիրիժարլը։

1930 թ. ընթացքում ավելի քան 200 թոփչք և կա-  
տարել, վորոնց ընդհանուր տեղությունը հավասար  
է 600 ժամին։

Պ.Ի. — 29, ունի 2200 խորանարդ մետր ծավալ  
և 100 ձիյու ուժ ունեցող Սիմենսի մի մոտոր, շին-  
ված և Շվեյցիայի պատվերով։ Այդ փոքրիկ գիրի-

Ժարլների համար հատկապես շինվեց կայմք քակվող կապ, վորի կոնստրուկցիան շատ պարզ եւ և վորը թույլ ե տալիս պահել դիրիժաբլը բացողյա, առանց ելինգ մտցնելու, (Տես նկ. 5):

#### ԿՈՇՏ ԴԻՐԻԺԱԲԼՆԵՐ

Իր կոնստրուկցիայով կոշտ դիրիժաբլը խիստ տարբերվում է մեր քննած սիստեմներից:


Կոշտ դիրիժաբլի հիմնական և գլխավոր մասը կազմում ե մետաղյա կարծր կարկասը, ցանցաձև սիպի:

Կոշտ դիրիժաբլի մեջ կտորը ծառայում է ձև տալուն, անմիջական բեռնավորում գազից նա չի կրում: Ներսի կողմից կարկասը բաժանված է մի շարք հատվածների, վորոնց մեջ տեղավորված են գազային բալոնները, վորոնք սակայն այս դեպքում ուղինապատ կտորից չեն շինված:

Կարկասի վարի մասից, առջեկ կողմից կախում են վարելու և ճանապարհորդների գոնգոլները և ապա կարկասի ծայրից մինչև ղեկը համաշափ, շախմատային կարգով դիրիժաբլի այս և այն կողմից կախում են մոտորների գոնգոլները, վորոնց թիվը վերջին դիրիժաբլների մեջ հնգից չի անցնում:

Կոշտ դիրիժաբլների գլխավոր կառուցողն է հանդիսանում «Յեպպելին» ֆիրման, վորը արդեն յերեսուն տարի պարապում է դիրիժաբլներ շինելով: Մեծուշադրություն է դարձնում կոշտ դիրիժաբլներ շինե-

լու վրա Ամերիկան, վորը ավել է պատվերներ փորձնական որինակներ շինելու համար Յեպպելին ֆիրմային և հրավիրել ե մի շարք գերմանական ինստրուկտորներ Ամերիկայում աշխատելու համար: Անգլիայում նույնպես շինում են կոշտ դիրիժաբլներ, վոր սակայն աննշան արդյունք ե տալիս, վորովհետեւ



LZ 127 „Graf Zeppelin“. Das Wenden vor dem Einfliegen.

Նկ. 7. «Յեպպելին», դիրիժաբլի դեկորը

անգլիացիները դեռևս չունեն անհրաժեշտ փորձառությունը:


Մեծածավալ կոշտ դիրիժաբլների հիմնական արժանիքն են կազմում ե նրա անգին բեռնաբարձունակությունը, վոր հասնում է մի քանի տասնյակ տոն-

նաների, և թոփչօթի մեծ արագությունը, վոր հասնում է 140 և ավելի կիլոմետրի մի ժամվա մեջ։ Այդ բոլոր հատկությունները անվտանգինելի մի միջոց են դարձնում հաղորդակցության համար այս տիպի գիրիֆարլը մեր պայմաններում, վորտեղ զգալի շափով, բացակայում են հաղորդակցության ճանապարհները։

Վերջին տիպերի գիրիֆարլների հատկությունները պարզվում են հետևյալ ավյալներից։

Տուցանելներ գիրիֆարլների	Դիրիժաբլներ			
	«Գրաֆ Յանցիկ»	«P.—105»	Ամերիկա	Լ.Ա.-128
Մավալը խորանարդ մետրերով	105,000	141,000	184,000	150,000
Ցերկարությունը մետրերով	235	220	2,9	237
Տրամադիմը մետրերով . . .	30,5	40,3	40,5	38,0
Բնոնաբարսք ճառանակությունը տոննաներով . . . . .	83,2	155	182,5	139
Բգտակար ընոնավորում տոննաներով . . . . .	15	24	33	25
Մուռարների ուժը ձիյաճաշվով	2,650	3,250	4,800	4,800
Մեծագույն արագությունը մի ժամում . . . . .	123	111	140	140
Արագությունը նավարկելիս մի ժամում . . . . .	117	101	120	120
Գրեծողության ուղիւնաը կիլոմետրերով . . . . .	10,000	6,000	17,000	14,000
Թոփչքի տեսողությունը ժամերով	85,5	59,4	141,7	116,6
Թոփչքի տեսողությունը որերով	3,5	2,5	6,0	5,0


Դիրիժաբլների ոգտագործման վորձ ներկայումս ամենից շատ ունեն գերմանացիները, Դրանով պետք է բացատրել այս փաստը, վոր չնայած թոփչքների կատարման անբարենպաստ յեղանակին, վերջին տարիներս գերմանացիների վոչ մի թոփչքը աղետավի հետևանք չի ունեցել։ Այսպես, 1928 թվականի վեր-



1 / 128. Graf Zeppelin. Landungsmannöver

Նկ. 8. «Յեպպելի» գիրիֆարլի գնդուլը


ջում «Գրաֆ Յանցիկինը» կատարեց նշանավոր թոփչք Յեվրոպայից Ամերիկա 111 ժամվա ընթացքում, ըստ վորում թոփչքի ժամանակ նա մի քանի անգամ ընկել ե յեղանակի անյերեակայելի դժվար պայմանների մեջ և դարձյալ հաղթող ե հանդիսացել։



Նկ. 9. «Ցեղազելին» դիրիժարլի դուբաւումինե կարկասը:

32

Այդ թոհմուն մասնակցել են 62 մարդ, դիրիժարլը ունեցել է 5 տոննա պոստ: Նույն դիրիժարլը 1929 թվի վերջում կատարեց աշխարհաշուրջ ճանապարհորդություն, ունենալով միմիայն յերեք ընդմիջում՝ հետևյալ մարզուտով՝ Ֆրիդրիխսհաֆեն — Տուկո (գաղար) — Լոս-Անջելոս (գաղար) — Նյու-Յորք




Նկ. 10. «Ցեղազելին» դիրիժարլի կարկասի ներքին տեսքը՝ հաղորդակցության վերի և վարի մուտքով:

(գաղար) — Ֆրիդրիխսհաֆեն: Որինակ՝ Ֆրիդրիխսհափեն — Տուկո տարածությունը, վոր հավասար է 12.000 կիլոմետրի, նա կտրել է առանց իջնելու 101 ժամում:

3—1601

33

Ամբողջ այդ աշխարհաշուրջ ճանապարհորդությունը — մոտ 35,500 կիլոմետր, — կատարվել է 12 որվա մեջ, իսկ նման մարզուտի նորմալ ընթացքի համար պահանջվում է 50 որ։ Մոսկվա—Տոկոս ճանապարհը խլել է ընդամենը 3,5 որ, այսինչ ձեզվ ընթաց գնացքով դրա համար հարկավոր կլիներ 14 որ։



Նկ. 11. Ռուսիա-կաբինա դիրիժարլում։

## ԴԻՐԻԺԱԲԼԸ, ՎՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ


Կառավարվող ողագնացության հսկայական նվաճումները ստիպում են լրջորեն զբաղվելու մեր Միության մեջ ուժեղ դիրիժարլու մտցնելու հարցով։ Լինելով յերկրագնդի մի վեցերորդ մասը,

ունենալով ահազին ու բոլորովին չուսումնասիրված յերկրամասեր հյուսիսում և Սիբիրում, մեր Միությունը չի կարող անոնես առնել հաղորդակցության այնպիսի կարող միջոցը, վորակիսին դիրիժարլու և ել չփոսած այնպիսի մարզուտների մասին, ինչպիսին են՝ Մոսկվա—Կոնստանտինովով, Մոսկվա—Կովկաս, Մոսկվա—Թուրքեստան — Պարսկաստան, մենք այժմ իսկ լրջորեն պիտի զբաղվենք Մոսկվա—Շայրաղույն Արևելք — Սախաբին — Կամչատկա գծի կազմակերպությամբ՝ իր բազմաթիվ ճյուղավորություններով զիսավոր գծեց դեպի այս կամ այն կողմը։ Միջինը թաղցրած ունի անհաշիվ հարստություններ, վորոնց հենց այժմ իսկ պետք է մտցնել յերկրի ինդուստրիալան ընդհանուր հաշվեկշռի մեջ։ Մինչդեռ ճանապարհների բացակայությունը խանգարում է մինչև իսկ ուսումնասիրել պատշաճ ձեռվով յերկրի հարստությունները, Բացի այդ, արդեն այն հանգամանքը, վոր տմբողջ տարվա ընթացքում հնարավոր և կապ սղանպանել ծայրագալառների և կենտրոնների միջև, ահազին նշանակություն ունի։ Դիրիժարլուով մշտական կապ կարգավորելու դեպքում կարելի յե հարց դնել կուսական շրջաններում գաղութավայրեր հաստատելու, նրանց հարստությունները սոցիալիստական շինարարության համար ոգտագործելու մասին։ Առաջին հերթին դիրիժարլուների հաղորդակցության գծեր ծրագրվում են այսպես. Գայլշիսա — Բուլուն — Նովոկուլիմսկ — Գայլշիսա — Տու-

բուխանսկ — Կրամնոյարսկ — Իրկուտսկ — Խմինսկ, Յակուտսկ — Վերխոյանսկ — Նովո-Կոլիմսկ և Յակուտսկ — Բուլուն: Ինչպես ցույց են տալիս տնտեսական հաշվարկությունները, այդ գծերի վրա սիմով աշխատեն 80—100.000 խորանարդ մետրից վոչ պակաս ծավալ ունեցող դիրիժաբլներ, վորոնք կարող են վերցնել իրենց վրա 10—15 տոննա ոգտակար ծանրություն և առանց իջնելու անցնել՝ 6—8000 կիլոմետր տարածություն:

Մենք փորձառություն դեռ բոլորովին չունենք դիրիժաբլները յերկար տարածությունների վրա՝ վորպես հաղորդակցության միջոց գործադրելու մեջ, բայց միևնույն ժամանակ գերմանացիների մեր աչքի առաջ կատարած փորձերը 11—12.000 կիլոմետր տարածություններ կտրելու գործում ստիպում են մեզ արագացնել բոլոր նախապատրաստական աշխատանքները դիրիժաբլներ շինելու հարցում, վորպեսզի սեփական շահագործման փորձով ընդարձակենք դիրիժաբլների գործադրության շրջանակները: Մեր բերած որինակը Գերմանիայից Տոկիո ճանապարհորդելու մասին 3,5 որվա մեջ, 14 որվա յերկաթուղային ճանապարհորդության փոխարեն, ինքնին վկայում ե իր մասին:

Միևնույն ժամանակ դիրիժաբլը տրամադրում ե ճամփորդներին ավելի շատ հարմարություններ, քան հաղորդակցության այլ միջոցները: Զարմացնում ե դիրիժաբլի ընթացքի բացարձակ սահունությունը,



Նկ. 12. «Յեպպելին» դիրիժաբլի խոհանոցը (Կեկտրական):

վորպիսին չի կարելի պատկերացնել հազորդակցության գոյություն ունեցող միջոցներից վոչ մեկի վրա։ «Թրափ ծեղպելին» դիրիժարլի վրա կան այն բոլոր հարմաքությունները, վորոնք կարող են արամաղղվել վագոնում, — միանգամայն ազատ յերթեւ վեկություն ճամբորդների կուպեների սահմաններում, առանձին, յերկտեղանի ննջարան-կայուտներ միջազգային վագոնի տիպի, կենտրոնական ելեկտրական ջերմություն և լուսավորություն, ռադիո՝ հաղորդումների համար, սքանչելի սարքավորված լվացարան տաք ջրով և, վերջապես, ոդային պոստ։

## ԴԻՐԻԺԱԲԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Այդ ասպարիզում դիրիժարլը ահապին դեր պիտի կատարի, Մատնանշենք լոկ հիմնական հնարավորությունները, վոր տալիս ե դիրիժարլների ոգտագործումը, ինչպես արդեն ասել ենք, փափուկ և կիսակոշտ դիրիժարլները ոգտագործում են ուսումնական նպատակների համար, թեև կարող են կատարել նաև թոփչքներ առանձին ընդունելի առաջադրանքներով։ „МОСКОВСКИЙ ХИМИК-РЕЗИНЩИК“ դիրիժարլը (2.500 խորանարդ մետր ծավալով) թոփչք կատարեց Լենինգրադից Տվեր և „КОМСОМОЛЬСКАЯ“ Պրավդա“-ն՝ (2.500 խորանարդ մետր ծավալով) Մոսկվայից Կուրսկ։ Հիշենք, վերջապես, Նորիլսկի թոփչքը Հյուսիսային

բների վրայով։ Ունենալով ահապին բեռնաբարձունակություն և գործնեյության մեծ ուաղիսւ, ուժեղ կոշտ դիրիժարլները, բացի ճանապարհորդներ և պոստ փոխադրելուց, կարող են բարիս բուն նշանակությամբ լինել ապրանքատարներ։

Յերկաթուղային գծերից հեռու գտնվող մեր արդյունաբաններին սպասարկելը և նրանց արտադրանքը տեղափոխելը, աշխարհից յերկար ժամանակով կարված ծայրազավառների սպասարկումը, պոստային կապ հեռավոր վայրերի հետ, պայքար, գյուղատնտեսության ֆնասատուների դեմ, ողակուսանկարչական հետազոտություններ, ոգնություն ձգնորսարաններին, առանձին հետազոտող խմբակներ տեղափոխելը, նրանց սպասարկությունը և նրանց հետ կապ պահպանելը, — ահա համառոտակի այն, ինչ կարող են տալ դիրիժարլները մեր ժողովրդական անտեսությանը։ Ինարկե, այս ցանկը լրիկ չե։

Եերենք մի փոքրիկ որինակ։

Ներկայումս մեծ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում Հյուսիսային Մեծ ճանապարհի սահմաններում, վորը ներկայացնում ե յերկաթուղային, ջրային և ոդային ճանապարհների մի կոմբինացիա։ Նախապատրաստական աշխատանքների ընթացքում այդ ճանապարհի վրա դիրիժարլները կարող են խաղալ շատ մեծ դեր, նրանք հնարավորություն կտան արագացնելու աշխատանքների ավարտը և բա-

նալու ինչպես կենտրոնական, նույնակեռ և ոժանդակ ուղիները:

Հատկապես կանգ առնենք զիրիժաբլների դերի վրա բնեռային յերկրների և հյուսիս-արևելյան ծայրագավառների ուսումնասիրության գործում:

Մեր յերկիրը բվեռային ույշումում մինչև այժմ գեռիս կարգին ուսումնասիրված չեւ, Դա բացատրվում է նրանով, վոր դեպի Արկտիկան (Հյուսիսային բերվեու) տանող ճանապարհները դժվարանում են հաստ սառցային կեղեռվ, վորը չի հալչում նույնիսկ ամառը: Միմիայն սառույց կտրատող ուժեղ նավերի ոգնությամբ կարելի յեւ առաջ շարժվել դեպի Արկտիկան: Ինչպես ցույց տվեց «Կրասինի» հոչակավոր արշավը, շատ սառույցներ հաղթահարել միշտ ի վիճակի չենույնիսկ զորեղ սառցահատը: Դիրիժաբլների պարկի սառելու դեմ կովելու միջոցներ գտնելու դեպքում Հյուսիսային լայնություններում (այդ ուղղությամբ տարվում են աշխատանքներ) կարելի կլինի ուսումնասիրել Արկտիկան դիրիժաբլներով, վորոնք այստեղ ել կարող են մեծ ոգուտ տալ:

Արկտիկայի ուսումնասիրության Միջազգային ընկերությունը մտադիր է 1931 թվին թոփչը կատարել գերմանական «Դրաֆ Յեպպելին» դիրիժաբլով: Հենց միայն այդ հանգամանքը ցույց եւ տալիս, թե այդ ընկերությունը ինչպիսի նշանակություն եւ տալիս դիրիժաբլին Արկտիկան ուսումնասիրելու գործում:

Հյուսիսում տարեցտարի ավելացող ապրանքաշրջանառությունը կարող եր խոշոր չափով թեթևանալ դիրիժաբլների ոգտագործման դեպքում: Նրանք կարող եյին մեծ ոգնություն հասցնել նավերին: Այդ ասպարիզում այերոպլանի և դիրիժաբլի միատեղ աշխատանքը ավելի կարագացնե և կհեշտացնե աշխատանքների ավարտը:

Սա յեւ դիրիժաբլների խաղաղ գործադրությունը: Բայց, բացի դրանից, դիրիժաբլը պատերազմի զորեղ միջոցներից մեկն է: Այդ պատճառով սեփական դիրիժաբլակառուցման զարգացումը ԽՍՀՄ-յան պաշտպանունակության բարձրացման ողակներից մեկն են հանդիսանում:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Դիրիժաբլներ շինելու գործում մենք, տեխնիկա-տեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրների հետ համեմատած, խիստ յետ ենք մնացել: Միևնույն ժամանակ մեր Միության ժողովրդական ամբողջ տնտեսության սոցիալիստական վերակառուցումը պահանջում է գործադրել տրանսպորտի բոլոր տեխնիկապես հնարավոր տեսակները: Մեզ անհրաժեշտ են դիրիժաբլներ:

Մենք համարյա անփորձ ենք դիրիժաբլներ կառուցելու գործում:

Ահա ինչպիսի դիրիժաբլներ ենք կառուցել մենք մինչև այժմ.

№№	Դիրիժաբլի տնօւնը	Շինու- թյան տարին	Մա- վար կալը	Արագու- թյունը մի- կըլումն	Բեռնա- շարձու- թյունը տոննա.
1	„Կրասնա Զվեզդա“ . . .	1919/20 թ.	10,000	63	3,7
2	„VI Օկտյաբր“ . . . .	1923	1,700	60	0,5
3	„Մոսկովսկի Խիմիկ- Ռեզինիկ“ .	1925	2,500	55	0,9
4	„Կոմսոմոլսկայ Պրավդա“	1930	2,500	70	0,9

Պետք ե նկատի առնել, վոր ներկայումս բոլոր այդ դիրիժաբլները բացի „Կոմսոմոլսկայ Պրավդա“ից դուրս են ընկել շարքից, և վոր ժամանակին նրանք միայն ուսումնական պետքերին ելին ծառայում ե նրանց վրա ոգտագործման թոփչքները անհնարին ելին, վոր նրանցից վոչ մեկը կիսակոշտ չեր և բոլորն ել խիստ թույլ ելին: Այդ պատճառով պարզ ե, վոր այժմ մեր առաջ ծառացած ե մի չափազանց գժվարին և պատասխանատու խնդիր դիրիժաբլներ կառուցելու գործում: Մենք պետք ե դիրիժաբլների շինարարության հետ միաժամանակ սովորենք կառուցել: Ինքնին հասկանալի յե, վոր դիրիժաբլներ կառուցելու փորձը այրութենից սկսելու կարիք չունենք: Մենք պետք ե վերցնենք Արևմուտքից այն ամենը, ինչ վոր լավ ե, բերենք մեզ մոտ և շարունակենք դիրիժաբլներ կառուցելու գործի զարգացումը վորոշ ուղղությամբ:

այն ե՝ մեծացնենք դիրիժաբլների բեռնաբարձունակությունը և արագությունը:

Մենք պետք ե մեծ ուշադրություն դարձնենք նաև դիրիժաբլների յերկարակեցության վրա. դրա համար անհրաժեշտ է վորոնել նոր նյութեր դիրիժաբլներ պատրաստելու համար: Դրա համար մենք պետք ե լավ ուսումնասիրենք դիրիժաբլը ամբողջովին մետաղից շինելու գործը, դեկավարվելով այն հարուստ նյութերով, վոր տալիս ե իր աշխատությունների մեջ մեր խորհրդային գյուտարար Կ. Ե. Ցիոլկովսկին:

Դիրիժաբլներ կառուցելը նոր, խոշոր և պատասխանատու գործ ե մեզ մոտ: Մենք պետք ե մոտենանք դրան խիստ զգուշությամբ, վորպեսզի կոպիտ, անուղղելի սխալներից զերծ մնանք: Այն հետաքրքրությունը, վորը ծագել ե Միության աշխատավոր լայն մասսաների մեջ դիրիժաբլներ կառուցելու գործի նկատմամբ, այլ և այն ոգնությունը, վոր ցույց ե տալիս այդ հարցերի լուծմանը Ոսուավիաքիմ ընկերության մեջ միացած հասարակայնությունը, իրավունք են տալիս մեզ համարձակ հայտարարելու, վոր, չնայած դժվարություններին, մենք վլուխ կբերենք դիրիժաբլներ կառուցելու գործը:

ԽԱՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ, ԿՈԼԽՈԶՆԻԿ  
ՆԵՐԻՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ, ՈՍԽԱՎԻԱՔԻՄԻ  
ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Լենինյան կուսակցության ղեկավարությամբ,  
ըստլշենիկական համառությամբ հաղթահարելով դժվա-  
րությունները և դասակարգային թշնամու ու նրա  
ագենտուրայի — ոպղորտունիստների ընդդիմադրու-  
թյունը, Խորհրդային Միության բանվոր դասակարգը  
հաղթականորեն կառուցում և սոցիալիստական հասա-  
րակակարգ։

Բանվոր դասակարգը, ընդդրկված հզոր վերելքով,  
սոցմքումով և հարվածային շարժումով, մեծ աշխա-  
տանքների հնգամյա պլանի հսկայական ծրագիրը  
իրականացնում և ամբողջ ֆրոնտով չորս տարում,  
արդյունաբերության մի շարք վճռական ճյուղերի հա-  
մար կրճատելով ժամկետը մինչև  $2\frac{1}{2}$ —3 տարի։

Ավարտելով ընթացիկ տարում սոցիալիստական  
եկոնոմիկայի հիմքի կառուցումը, բանվոր դասակարգը  
խանդավառությամբ և կենսագործում կուսակցության՝  
«Տեխնիկային տիրանալու» լոգունղը, պայքարելով  
պատմական խնդրի հաջող իրականացման համար —  
վոչ ավել քան 10 տարվա ընթացքում հասնել և  
առաջ անցնել տեխնիկա-տնտեսական տեսակետից  
առաջավոր կատիտայիստական յերկրներից։

ԽՍՀՄ-յան ամենալայն բանվորական և աշխատա-  
վորական մասսաների խանդավառության անորինակ  
վերելքի ակնբախ ապացույցներից մեկն ե — այդ  
պատմական խնդրի արագագույն իրականացման հա-  
մար, բոյլշենիկական տեմպերի համար պայքարելու գոր-  
ծում — խորհրդային դիրիժաբլների կառուցման կամ-  
պանիան, փոք անորինակ վոգեկորությամբ տեղի ունի  
Խորհրդային ամբողջ Միության մեջ։

ԽՍՀՄ-յան բանվորների, կոլխոզնիկների և աշխա-  
տավորների լայն մասսաները ջերմորեն արձագան-  
քեցին ԽՍՀՄ-յան Ոսուավիաքիմի Կենտրոնական Խոր-  
հրդի կոչին — խորհրդային դիրիժաբլակառուցում ստեղ-  
ծելու համար։

«Դիրիժաբլի որը» առաջ բերեց ամենուրեք բան-  
վորական և աշխատավորական մասսաների ակտիվու-  
թյան և նախաձեռնության նոր զորեղ վերելք Խորհր-  
դային դիրիժաբլների կառուցման գործում։

Ընկ. Լենինը գրեթե 17 տարի սրանից առաջ,  
դեռևս 1914 թ., լինելով Շվեյցարիայում եմիգրացիայի  
մեջ, իրապես մարդարեական խոսքեր ե ասել. —  
«Սպասենք, մինչև վոր ունենանք մեր դիրիժաբլները»։

Կենսագործելով ընկ. Լենինի պատգամները, Մոսկ-  
վայի խոշորագույն գործարանների (Ելեկտրոգործա-  
րան, «Դինամո», «Կառշուշ», Իլլիչի գործարան,  
«Մուրճ ու մանդաղ» և այլն) բանվորները առաջա-  
զբել են դիրիժաբլների Լենինի անվան եսկադրայի  
կառուցման լոգունղը։

Հիմնվելով կարմիր մայրաքաղաքի բանվորների նախաձեռնության վրա, ԽՍՀՄ-յան Ոսուավիաքիմի կենտր. Խորհրդի պրեզիդիտումը վորոշում ընդունեց Լենինի անվան դիրիժաբեների եսկադրա ստեղծելու մասին — «Լենին», «Ստալին», «Հին բոյլշևիկ», «Պրակդա», «Կիմ Վորոշիլով», «Ոսուավիոքիմ» և «Կոլխոզնիկ» դիրիժաբեների կազմով, գլխավորված «Լենին» դիրիժաբելով, այդ լոգունզի տակ միավորելով բոլոր կազմակերպությունների մինչև այժմ տարված ամբողջ աշխատանքը խորհրդային դիրիժաբրլակառուցման համար միջոցներ ստեղծելու և հավաքելու ուղղությամբ:

Մտցնելով իր «Ոսուավիաքիմ» դիրիժաբլը, վորի համար արդեն հավաքված ե ավելի քան 3 միլ. ռ., Լենինի անվան դիրիժաբեների եսկադրայի կազմի մեջ, ԽՍՀՄ-յան Ոսուավիաքիմի էկենտր. Խորհուրդը իր կազմակերպությունների ամբողջ գործնեյությունը կենտրոնացնում ե միջոցներ հավաքելու վրա «Լենինի անվան դիրիժաբեների եսկադրայի կառուցման» լոգունգի տակ։

Մոբիլիզացիայի յենթարկելով Խորհրդային միության բանվորների, կոլխոզնիկների և աշխատավորների լայն մասսաներ միջազգային պրոետարական համերաշխության ամրացման համար, արդինապլանի և բոյլշևիկական գարնանացանի պլանի կատարման և գերակատարման համար, համատարած կոլեկտիվացման և դրա հիման վրա կուլակության, վորպես դա-

սակարգի, լիկվիդացիայի իրագործման համար, յերկրի պաշտպանունակության և կարմիր բանակի զորության ամրացման համար, լայն մասսայական աշխատանք տանենք ձեռնարկություններում, սովխոզներում, մենքենա - տրակտորային կայաններում, կոլխոզներում և մենատնտեսավար չքավորների ու միջակների շրջանում, պարզաբանելով Լենինի անվան դիրիժաբլների եսկադրայի կառուցման խնդիրներն ու նշանակությունը և միջոցներ հավաքելով նրա կառուցման համար։

Սոցիալիստական մրցման լայն ծավալման լրացող յերկրորդ դարեղարձը վերածենք խորհրդային դիրիժաբլակառուցման ամբողջ կամպանիայի վերելքի գորեղ լծակի, բարձրացնելով այն ավելի բարձր աստիճանի — «Լենինի անվան դիրիժաբլների եսկադրայի» միասնական, միավորող լոգունգի տակ։

Ֆաբրիկների, գործարանների, սավիսովների, մեքենա-տրակտորային կայանների բանվորներ, կոլխոզնիկներ, չքավոր ու միջակ մենատնտեսավարներ, ակտիվ մասնակցեցեք Լենինի անվան դիրիժաբլների եսկադրայի կառուցմանը! Մավալեցեք սոցմրցում այդ աշխատանքի և միջոցներ հավաքելու շուրջը բրիգադների, ցեխների, գործարանների, կոլխոզների, Կուղբերի միջեւ!

ԽՍՀՄ-յան մեջ բնակվող բոլոր ազգությունների աշխատավորներ! Հիշելով, վոր դիրիժաբլը կենարոնի և աղգային ծայրագավառների կուլտուրական և կաղ-

մակերպչական կապի զորեղ միջոցն ե հանդիսանում,  
կենտրոնացրեք աշխատավորների ուշադրությունը  
Լենինի անվան դիրիժաբլների եսկառայի կառուցման  
համար միջոցներ հավաքելու վրա:

Ոսուավիաքիմի կազմակերպություններ և անդամ-  
ներ! Յեղեք Լենինի անվան դիրիժաբլների եսկառ-  
րայի կառուցման կամպանիայի նախաձեռնողներ: Կու-  
սակցական կազմակերպությունների ղեկավարությամբ  
զորակոչեցեք բանվորների, կոլխոզնիկների և աշխա-  
տավորների լայն մասսաների ակտիվությունը Լենինի  
անվան դիրիժաբլների եսկառայի կառուցման շուրջը:

Խորհրդային դիրիժաբլների կառուցման կամպա-  
նիան պետք ե անքակտելիորեն կապված լինի համաշ-  
խարհային պրոլետարական հեղափոխության առաջնորդ  
և Կոմինտերնի հիմնադիր—Վ. Ի. Լենինի անվան հետ և  
նրա պատգամի իրագործման հետ այդ ասպարիզում:

Կենսագործենք ընկ, Լենինի պատմական խոս-  
քերը.—«Մենք կունենանք մեր դիրիժաբլները!»:

Լենինի անվան դիրիժաբլների եսկառայն կա-  
վառնի Խորհրդական Յերկրի վրա!

ԽՍՀՄ-յան Ոսուավիաքիմի  
Կենտրոնական Խորհրդի պրեզիդիում

14 ապրիլի 1931 թ.  
Մանկական

Դիրիժաբլներ գանձող կոմիտեները գումարները ուղար-  
կելու յին — Պետրովնին Մոոկայի շնչանի բաժանմունքին, ըն-

թացեկ Հայոց թ. 109710

12 ЧМ.

Цена 12 коп.  
о. п. 4



Строим эскадру  
дирижаблей  
имени Ленина  
(перевод с русского)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР  
Москва, Центр, Никольская, 10.

«Ազգային գրադարան



NL0276914

14.553